ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

Երևան-0010, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 1

N 17/17.4/43512-2024 « 17 » 12 2024թ.

«ԴՈՆԵՌ» ՍՊԸ-Ի
ՏՆՕՐԵՆ Ա. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻՆ
(*Հասցե՝ ք. Երևան, Գայի 51/5*)

Հարգելի՝ պարոն Հայրապետյան,

ՀՀ կառավարությանը ենթակա շուկայի վերահսկողության տեսչական մարմնի կարիքների համար գրասենյակային գույքի ձեռքբերման նպատակով օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ վարչապետի աշխատակազմի և «ԴՈՆԵՌ» ՍՊԸ-ի միջև 03.11.2023թ. կնքվել է ՎԱՇՎՏՄ-ԷԱՃԱՊՁԲ-24/7-2 ծածկագրով ապրանքների մատակարարման պայմանագիր: Համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո պայմանագրի շրջանակում 16.02.2024թ. կողմերի միջև կնքվել է համաձայնագիր:

Պայմանագրի 1.1-ին կետի համաձայն՝ Ընկերությունը (տվյալ դեպքում՝ «ԴՈՆԵՌ» ՍՊԸ-ն) պարտավորվել է սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով նախատեսված ապրանքները, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Մատակարարման վերջնաժամկետ է սահմանվել 12.11.2024թ., սակայն սահմանված ժամկետում ապրանքները չեն մատակարարվել:

Գնման գործընթացի պատասխանատու ստորաբաժանում հանդիսացող՝ շուկայի վերահսկողության տեսչական մարմնի 11.12.2024թ. թիվ 01//2478-2024 գրությամբ ներկայացված հավաստմամբ (կցվում է)՝ վերջինս 05.12.2024թ. գրությամբ դիմել է Ընկերությանը՝ հորդորելով եռօրյա ժամկետում մատակարարել Պայմանագրի N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագրով նախատեսված ապրանքները, նշելով, որ հակառակ դեպքում Պայմանագրի 2.1.7 կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության

համաձայն Պայմանագիրը միակողմանի կլուծվի և կկիրառվեն «Գնումների մասին» ՀՀ օրենքով սահմանված պատասխանատվության միջոցները: Ընկերության կողմից նշված ծանուցմանը պատասխան չի ստացվել: Փաստացի, Ընկերությունը հրաժարվել է մատակարարել Պայմանագրով նախատեսված ապրանքը:

Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն՝ Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը: Վաճառողի կողմից խախտումն էական է համարվում, եթե ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ընկերությունը խախտել է պայմանագրով սահմանված պարտավորությունները՝ չիրականացնելով պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարումը, վարչապետի աշխատակազմը՝ հիմք ընդունելով վերը նշված իրավական հիմքերը, միակողմանի հրաժարվել է 03.11.2023թ. Ընկերության հետ կնքված ՎԱՇՎՏՄ-ԷԱՃԱՊՁԲ-24/7-2 ծածկագրով ապրանքի մատակարարման պայմանագրից՝ համարելով այն ամբողջությամբ լուծված:

Միաժամանակ, Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» պարբերության համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ***պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա***: Նույն մասում նշված որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու կամ կնքված պայմանագրի վերաբերյալ հայտարարությունը հրապարակելու կամ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող տասն օրվա ընթացքում: Որոշումը կայացվելուն հաջորդող օրը այն տրամադրվում է լիազորված մարմնին և մասնակցին:

Ընդ որում, ՎԱՇՎՏՄ-ԷԱՃԱՊՁԲ-24/7-2 ծածկագրով ընթացակարգի հրավերի 8.15 կետի համաձայն՝ եթե լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալու օրվա դրությամբ մասնակիցը կամ պայմանագիրը կնքած անձը վճարել է հայտի, պայմանագրի և (կամ) որակավորան ապահովման գումարը, ապա պատվիրատուն տվյալ մասնակցին ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը չի ներկայացնում լիազորված մարմին:

Հաշվի առնելով վերոգրյալը, տեղեկացնում եմ, որ Պայմանագրի միակողմանի լուծման արդյունքում Ընկերության կողմից տուժանքի ձևով ներկայացված պայմանագրի և որակավորման ապահովումները սահմանված կարգով կներկայացվեն Ընկերությանը սպասարկող բանկ՝ տուժանքի մասին համաձայնագրով սահմանված գումարները ՀՀ Ֆինանսների նախարարության կողմից բացված 900005000758 գանձապետական հաշվեհամարին փոխանցելու համար:

Միաժամանակ հայտնում եմ, որ սույն ծանուցմամբ պատվիրատուն ապահովել է ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված պահանջի կատարումը:

ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐԻՉ ԳԱՐԻԿ ԲՈՇՅԱՆ

Կատարող՝
գործերի կառավարչություն
հեռ. 010 515-663